ՎԵՐԱՕԾՎԵՑ ՍԱՅԴԱԲԱԴԻ Ս. ՄԱՐԻԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Մարտի 4-ը նշանակալից օր էր հնդկահայ գաղութի համար. Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրապետական Պատվիրակ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանի ձեռամբ և մասնակցությամբ հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի, Մայր Աթոռի միաբաններ Տ. Վարդան աբղ. Նավասարդյանի և Տիգրան սրկ. Բաղումյանի օծվեցին Ս. Մարիամ վերանորոգված եկեղեցու Ս. Սեղանն ու սյուների 16 խաչերը:

Սայդաբադի Ս. Մարիամ հայկական եկեղեցին կառուցվել է 1758 թ. ջուղայեցի նշանավոր վաճառական, բարեգործ Խոջա Պետրոսի անձնական միջոցներով: Անցած տարի Կալկաթայի նորընտիր եկեղեցական վարչության նախաձեռնությամբ ամբողջովին վերանորոգվել է եկեղեցին, կառուցվել նոր զանգակատուն և հյուրատուն, բարեկարգվել է եկեղեցուն կից տարածքը և հայ համայնքին են վերադարձվել նախկինում ապօրինաբար զավթված տարածքները:

Օծման արարողությունից հետո Աղան Սրբազանը ջերմորեն շնորհավորեց ամենքին նշանակալից օրվա կապակցությամբ՝ ընդգծելով, որ հնդկահայության ուսերին ծանր և քաղցր բեռ է դրված՝ հայաշունչ պահելու այս հոյակերտ եկեղեցին, ուր դարեր շարունակ հնչել է հայ մարդու աղոթքն առ Աստված: Սրբազան Հայրը նաև իր գնահատանքը հայտնեց եկեղեցական վարչության անդամներին և հնդկահայոց հոգևոր հովվին՝ նախանձախնդիր և ջանադիր աշխատանքի համար:

Այնուհետև կատարվեց հոգեհանգիստ եկեղեցու բակում թաղված հայորդիների հոգիների խաղաղության համար:

Արարողությանը ներկա էին եկեղեցական վարչության անդամները, հնդկահայեր և ԱՄՆ-ից այս առիթով ժամանած՝ Սայդաբադի հայկական եկեղեցու վերջին խնամակալներ Մատթեոս և Մերի Կարապետյանների դուստրը՝ տիկին Լուսի Այվազյանը, և թոռնուհին՝ տիկին Հեղինե Քրեյը:

ԴԻՎԱՆ ԿԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ